# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում 2017թ-ի ապրիլի 7-ին կնքված ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի մայիսի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել:

Փոփոխության նկարագրություն: Երկարաձգվել է Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը, այն սահմանվելով մինչև 2017 թվականի հունիսի 16-ը ներառյալ:

Փոփոխության հիմնավորում: Հիմքը՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 60-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-2

# 07.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «15» մայիսի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Է.Ապրեսյան» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Է.Ապրեսյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 07.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը, այն սահմանելով մինչև 2017 թվականի հունիսի 16-ը ներառյալ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «Է.Ապրեսյան» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք.Վանաձոր, Թամանցիների 14 |
| ՀՀ ֆինանսների նախարարության | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| աշխատակազմի գործառնական վարչություն | |
| Հ/Հ 900013202016, 900013574018 | Հ/Հ 2050222004191001 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 06919097 |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ | «Է.Ապրեսյան» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Ա.Սահակյան | Է.Ապրեսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| M.P. | M.P. |